


Պալատի խորհրդի նախագահ՝



Սիմոն Բարսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«Փաստաբանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:

Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կազմավորվում է չորս տարի ժամկետով՝ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը փաստաբաններից:

Փաստաբանների պալատի հանձնաժողովը՝

1) քննարկում և լուծում է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր.

2) իրականացնում է «Փաստաբանության մասին» օրենքով և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հանձնաժողովը 2024թ. անցկացրել է ընդհանուր 113¹ նիստ, որոնցից՝ 50 նիստ անցկացվել է համակցված հեռավար և առկա ձևաչափով, իսկ 63 նիստ՝ առկա ձևաչափով:

2024 թվականին Հանձնաժողովը քննել և դրանց արդյունքներով կայացրել է 214 որոշում, 1 գործով կայացվել է կասեցման որոշում:

2024 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից քննված և ավարտված գործերի վիճակագրություն

1	Ավարտված կարգապահական վարույթները, այդ թվում՝	214
1.1	կարճված	98
1.2	պատասխանատվության ենթարկված	116

¹ 37 նիստ հրավիրվել է Հանձնաժողովի որոշման եզրափակիչ մասը հրապարակելու նպատակով:

2	Կարճված վարույթները ըստ հիմքերի, այդ թվում՝	98
2.1	կարճված փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	0
2.2	կարճված վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	13
2.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	3
2.4	կարճված այլ հիմքերով հարուցվածներից (ԶԼՄ, քննչական մարմին)	5
2.5	Կարճված անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված գործերից	1
2.6	Կարճված վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	76

3	Պատասխանատվության ենթարկվածներ	116
3.1	փաստաբանների բողոքների հիման վրա հարուցվածներից	0
3.2	վստահորդների բողոքների հիման վրա հարուցվածներից	16
3.3	հակառակորդ կողմի բողոքի հիմքով հարուցվածներից	1
3.4	այլ հիմքերով հարուցվածներից (ԶԼՄ, քննչական մարմին)	5
3.5	անդամավճարը չվճարելու հիմքով հարուցված գործերից	58
3.6	վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված գործերից	36

ՔՆՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ՝ 214	
Կարճված վարույթներ՝ 98 (46%) այդ թվում՝	Կարգապահական տրույժով ավարտված վարույթներ՝ 116 (54%) այդ թվում՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝



Տաթևիկ Շալջյան